

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

20 հոկտեմբերի 2023թ.  
ք. Երևան

N 76-Ա

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԹԻՎ 7 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ուսումնասիրելով թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի «Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ» թիվ 7-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. Թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի «Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ» թիվ 7-Ա որոշմամբ ներկայացվել է միջնորդություն՝ թիվ 7/13 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Հերմինե Մարգարյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումները, ուսումնասիրության արդյունքներն ամփոփել և այդ մասին ընդունած որոշումը ներկայացրել է Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Միջնորդության ներկայացման համար հիմք է հանդիսացել թիվ 7/13 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարված գրառումն առ այն, որ՝ «Ծրարների բացելու ընթացքում հայտնաբերվել է 2 ծրար, որոնց վրա փակցված է եղել 2 դրոշմանիշ, իսկ մեջը քվեաթերթիկ չկա: Արդյունքում պարզվեց, որ որոնց ինքնությունը չենք հիշում և պահանջել են որպեսզի դրոշմանիշը անպայման փակցվի դատարկ ծրարի վրա: Հանձնաժողովի անդամին մերժելուց հետո տվյալ անձինք սկսել են գոռալ և կրկին անգամ պահանջել փակցնել դրոշմանիշը ծրարի վրա և գցել արկղի մեջ: Հանձնաժողովի անդամն էլ վախից կպցրել է և կատարել քաղաքացու պահանջը, և տվյալ պահին չտեղեկացնելով

հանձնաժողովի նախագահին և քարտուղարին, որպեսզի գրանցամատյանում արձանագրվեն: Տվյալ 2 դրոշմանիշը համարվում է չօգտագործված»:

Թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի նիստում իրականացված վարչական վարույթի շրջանակներում հանձնաժողովը պարզել է, որ ինքնասուսնծվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամ՝ Հերմինե Մարգարյանը ինքնասուսնծվող դրոշմանիշը փակցրել է քվեարկության ծրարի վրա, ինչը հանդիսանում է Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի խախտում: Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է.

«Քվեարկելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է քվեատուփի մոտ ինքնասուսնծվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին և նրան է հանձնում քվեարկության կտրոնը: Հանձնաժողովի անդամն ստուգում է կտրոնը, իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի այլ անդամի կամ վստահված անձի պահանջով կարող է ստուգել նաև ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը: Հանձնաժողովի անդամն առանց քվեարկության ծրարն ընտրողից վերցնելու քվեարկության ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին է փակցնում ինքնասուսնծվող դրոշմանիշը, որից հետո բացում է քվեատուփի ճեղքը և ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեարկության ծրարը գցելու քվեատուփի մեջ (...):»:

Նշվածի կապակցությամբ՝ 20.09.2023թ. Հերմինե Մարգարյանը բացատրագիր է ներկայացրել առ այն, որ «սկզբից տեղի է ունեցել շփոթմունք, ինքնասուսնծվող դրոշմանիշը փակցրել են ծրարի վրա: Շուտ զգալով իմ սխալը՝ շտկել են»: Արդյունքում, թիվ 7/13 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Հերմինե Մարգարյանը իր հերթափոխի ընթացքում, երբ հանդիսացել է ինքնասուսնծվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամ, քվեարկության 2 ծրարների վրա փակցրել է մեկական դրոշմանիշ:

Նշված հանգամանքը հիմք է հանդիսացել թիվ 7/13 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելու համար: Վերահաշվարկի արդյունքում անվավեր թվեաթերթիկների թիվը՝ 7-ից դարձել է 0, քանի որ տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից, ըստ էության, չսահմանված նմուշի քվեաթերթիկները համարվել են անվավեր քվեաթերթիկներ:

Ընտրական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Սահմանված նմուշի քվեաթերթիկ է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված նմուշի այն քվեաթերթիկը, որը հանվել է ծրարից, և որի վրա փակցված է այդ ընտրական տեղամասի ինքնասուսնծվող դրոշմանիշը:»:

Թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, Ընտրական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի կանոնակարգման համաձայն, առանց ինքնասուսնծվող դրոշմանիշի քվեաթերթիկները համարել է չսահմանված նմուշի, և Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ չսահմանված նմուշի քվեաթերթիկները հաշվի չի առել և չի հաշվարկել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստում է, որ թույլ է տրվել Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 7-րդ մասի խախտում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 7/13 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Հերմինե Մարգարյանը պատշաճ ծանուցվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի ժամը 15:00-ի նիստի մասին, սակայն չի ներկայացել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

### **Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Թիվ 7/13 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Հերմինե Մարգարյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել և ուժը կորցրած ճանաչել Հերմինե Մարգարյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Վ. Հովակիմյան**